Արձանագրություն N 2
ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-23/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 24 նոյեմբերի 2022թ
ժամը 09:30

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Սողոմոն Մաթևոսյանը
անդամներ՝ Ալիսա Հայրապետյանը, Հռիփսիմե Աջամօղլյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան

I. Հայտերի բացման մասին

(Սողոմոն Մաթևոսյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

ա/ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան գնումների էլեկտրոնային (eauction.armeps.am) աճուրդի համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

N	*Մասնակցի անվանումը*		*Մասնակցի հասցեն և կապի միջոցները*
1	2		3
1	«Քինգ Մարշալ» ՍՊԸ	-	ք. Երևան, Բագրատունյաց փողոց թիվ 10/5, հեռ. 098470040, 81-22, 011-81-22-00, king-marshal@mail.ru
2	«Աբսոլյուտ սեքյուրիթի» ՍՊԸ*	-	ք. Երևան, Աբովյան փ. 3, հեռ.077 78 01 03, absolute.security@mail.ru
3	«Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ	-	ՀՀ 1Փ 12 Դարբնիկ 0809 Դարբնիկ Արարատ, հեռ. 099-55 55 87, 0099555587@mail.ru
4	«Սուր և Նիզակ» ՍՊԸ	-	ք. Երևան, Գրողների 18, հեռ. 010624183, surevnizak2021@mail.ru

*Մասնակիցը ԱԱՀ վճարող չէ

բ/ Մասնակիցների կողմից աճուրդի ամփոփման ժամկետի ավարտին առաջարկված գները հետևյալն են.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	առաջարկած գինը ըստ չափաբաժինների՝ առանց ԱԱՀ-ի (ՀՀ դրամ)	
		1-ին չափաբ.	2-րդ չափաբ.
1	2	3	4
1	«Քինգ Մարշալ» ՍՊԸ	5369000	2125000
2	«Աբսոլյուտ սեքյուրիթի» ՍՊԸ*	5986680	2017500
3	«Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ	8000000	2500000
4	«Սուր և Նիզակ» ՍՊԸ	8250000	1996250
գնման գինը (ՀՀ դրամ)		8000000	2500000

գ/ Գնման առարկայի բնութագրերի հիմնավորումներ չեն պահանջվել և չեն ներկայացվել, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

II. Հայտերի գնահատման մասին

(Սողոմոն Մաթևոսյան)

2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց աճուրդին ներկայացրած հայտերը և արձանագրեց, որ.

ա/ «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ի կողմից 2-րդ չափաբաժնի համար ներկայացրած գնային առաջարկը, «Սուր և Նիզակ» ՍՊԸ-ի 1-ին չափաբաժնի համար ներկայացրած գնային առաջարկը, «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից 1-ին և 2-րդ չափաբաժինների համար ներկայացված գնային առաջարկները գերազանցում են գնման գինը:

բ/ էլեկտրոնային (eauction.armeps.am) աճուրդի համակարգի կողմից մերժվել է «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ի կողմից 2-րդ չափաբաժնի համար ներկայացրած, «Սուր և Նիզակ» ՍՊԸ-ի 1-ին չափաբաժնի համար ներկայացրած, «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից 1-ին և 2-րդ չափաբաժինների համար ներկայացրած հայտերը՝ հետևյալ հիմնավորմամբ, առաջարկված գինը գերազանցում է գնման գինը:

2.1 Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ի և «Սուր և Նիզակ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտերը և արձանագրեց, որ.

ա/ «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

բ/ «Սուր և Նիզակ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրի /հավելված 1.2/, իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվության 4-րդ բաժնի 4.5. ենթաբաժինը լրացված չէ դրա լրացման կարգին համապատասխան, մասնավորապես.

հայտարարագրի 4.5 ենթաբաժնի «ա» կետում կատարվում է նշում, եթե ֆիզիկական անձը ուղղակի կամ անուղղակի տիրապետում է Կազմակերպության՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 20 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն Կազմակերպության կանոնադրական կապիտալում, այս ենթաբաժնի «բ» կետում կատարվում է նշում, եթե անձն «ա» կետի իմաստով չի հանդիսանում կազմակերպության իրական շահառու, սակայն վերահսկում է Կազմակերպությունը՝ իրավական գործիքների (այդ թվում՝ կնքված գործարքների) ուժով, այլ բնույթի անձնական ազդեցության հիման վրա կամ այլ միջոցներով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

3. Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով վերոգրյալը և հրավերի 8.9 կետով սահմանված պահանջները, որոշեց.

ա/ մերժել 2-րդ և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերը հրավերի 8.9 կետով սահմանված պահանջի համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

III. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների ամփոփման մասին

(Սողոմոն Մաթևոսյան)

4. Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով հայտերի գնահատման արդյունքները, որոշեց.

ա/ հրավերի 8.11 կետով սահմանված պահանջների համաձայն կասեցնել հանձնաժողովի նիստը մեկ աշխատանքային օրով և հրավերով սահմանված կարգով՝ համակարգի միջոցով ծանուցել «Սուր և Նիզակ» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

բ/ ընթացակարգի հայտերի գնահատման նպատակով գնահատող հանձնաժողովի նիստ հրավիրել 2022թ. նոյեմբերի 28-ին ժամը 10:15-ին ք. Երևան, Նալբանդյան 13, 4-րդ հարկի դահլիճ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի		
նախագահ		Ս. Մաթևոսյան
անդամներ՝		Ա. Հայրապետյան
		Հ. Աջամօղլյան
քարտուղար՝		Գ. Ջանջուղազյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

շահերի բախման բացակայության մասին

ք. Երևան 24 նոյեմբերի 2022թ.

ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-23/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով ծառայությունների գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ս. Մաթևոսյանս, անդամներ՝ Ա. Հայրապետյանս, Հ. Աջամօղլյանս հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Ջանջուղազյանս նշված ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո հայտարարում ենք, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունենք շահերի բախում:

Հանձնաժողովի		
նախագահ		Ս. Մաթևոսյան
անդամներ՝		Ա. Հայրապետյան
		Հ. Աջամօղլյան
քարտուղար՝		Գ. Ջանջուղազյան